

Կայացավ քաղաքացիների հուլիս ամսվա ընդունելությունը

14.07.2014

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մոտ ա/թ հուլիսի 11-ին կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 71 քաղաքացի, ընդունելության էին եկել 64-ը:

Ընդունելության եկած 62 քաղաքացիներ դիմել էին ֆինանսական օժանդակության խնդրանքով, որոնց խնդրանքը բավարարվեց: 2 քաղաքացի դիմել էր աշխատանքի տեղավորման խնդրանքով, որոնց դիմումների վերաբերյալ հանձնարարություն տրվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ ուսումնասիրել հարցերը և օրենքով նախատեսված ժամկետներում պատասխանել: